կաթողիկէիւ, երկնաչու կամարաք, բարձր սիւնե-
րով և քանդակագործ խարիսխներով և խոյակնե-
րով, կը յիշեցընէ կամ լաւ ևս կը պատկերա-
ցընէ աչաց դիմաց՝ տարաբաղդն Անւոյ գեղեցկա-
գոյն եկեղեցեաց մին։ Եկեղեցւոյն մէջ ամենայն
ինչ ազգային ճաշակով յարդարուած է, և հայու-
թիւն կը շնչէ. ազգային սրբոց կենդանագիրք կը
զարդարեն պատերը, թագապակ հայրապետք ազ-
գային տարազով, սրբակրօն վարդապետք վեղարիւ
աբողեալք։ Աւագ խորանին պատկերը նմանութիւն
է Մուրիլլոյ սպանիացի նկարչին՝ Աստուածամոր
անարատ յղութեան պատկերին. վերի կողմը նկա-
րուած է ամենասուրբ Երրորդութիւն, որ զհրա-
շագեղ Կոյսը կը պսակէ երկնային պսակաւ թա-
գուհի երկնի և երկրի։ Քրիստոնէական սուրբ հա-
ւատոյս մերոյ էական մասունք հանդերձ պատմու-
թեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ, յանդիման կ'ե-
րևնայ փոքր եկեղեցւոյս մէջ, որ կը կրէ զանուն
Ս. Կարապետի՝ պաշտպանի ազգիս Հայոց։ Եկե-
ղեցւոյս ճարտարապետն եղած է Պ. Բաղտասար
Հազր-Բէգեան՝ հայ երիտասարդն, որ ճարտար
յատակագծին համար ստացել է վարձ արծաթի
միտալ Ս. Պետրբուրգի ակադեմիայէն. վերակացու
գործոն եղած է Յովհաննէս աղա Խաթրանեան.
բովանդակ եկեղեցին շինուած է տրուք բարեպաշտ
տիկնոջ Ակուլինէ Աղաճանեան. 1882 ին Մակար
սրբազան, յետոյ կաթողիկոս ամենայն Հայոց,
հանդիսապէս օծած է։ Ինքնին Յովհաննէս աղա,
ոգևորեալ կերպով խօսելով քննողիս հետ՝ եկեղե-
ցւոյ մասին, կը հարցընէր թէ « Օտարոտի իմն կամ
ոչ ազգային՝ արդեօք սպրդած է շէնքին ». վասն
զի նա բանեցուցել է ամենայն ջանք՝ որ ամենայն